


ՊԱՏՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 8 ՄՃ.
Գաւառաց 40 ՄՃ.
Վեցամս. Կ. Պոլսոյ 4 ՄՃ.
Գաւառաց 5 ՄՃ.
Օտար երկիրներու 50 Ֆր.
Մանուցման տոգը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դրէ 5. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Խրաքանչիւր թիւ 2 դրնոց թուղթ.



ԼԵԱՔԻՐ

ՀԱՆԱՊԱՁՕՐԵԱՅ

ՊԱՏՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանրու-
ծախքը խորագրութեան վրայ է :
Լրագրոց վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն խորագիրը
— ճանրելին պիտի ուղղուի : Ղալա-
թիա Սանտրքճըլար շատուէսի թիւ
198, Նոթո խան, Մասխի գրասեն-
եակը :
Ճանրու ծախքը չիմարուած նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ, յօդուած, եւ
ետ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ Տ ՓԵՏՐՎԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Աֆղանստանայ մէջ Անգղիացիք
ձմեռուան պատճառաւ ղրնուորական
գործողութիւնները դադարեցուցին և
Լորտ Պերթոնֆիլա Լորտերուն ժողո-
ւին մէջ յայտարարեց թէ Աֆղանստա-
նայ պատերազմին իւրնպատակին հա-
սած է :

Բայց անգղիական կառավարու-
թեան նոր հոգ մ'ալ կենէ բնաւ չը
յուսացուած տեղէ մը, այն է Բարե-
յուսոյ հրումանգանէն, ուր անգղիաց-
ւոց կրած ծանր պարտութիւնն, Անգ-
ղիոյ թշնամիներն իսկ չէին կրնար ե-
րևակայել :

Այս անակնկալ դէպքն Եւրոպիոյ
ուշագործութիւնն արթնացուց Բարեյու-
սոյ հրումանգանին ներսի կողմերը
գտնուած կէս վայրենի ժողովրդոց և
մասնաւորապէս Ձուլուներու ցեղին
հետ Անգղիացւոց ունեցած յարաբե-
րութեանց վրայ :

Ձուլուներն հարաւային Աֆրիկէի
մէջ կարեւոր ցեղն են, և անգղիաց-
ւոց ձեռքը գտնուած երկիրներուն
հետ սերտ յարաբերութիւններ ունին
միշտ :

Ասկէ քանի մ'ամիս առաջ՝ քանի
մը Ձուլուներ, յորս նաեւ ցեղին գըլ-
խաւորաց երկու որդիքն, իրենց եր-
գիւրն և Անգղիացւոց ձեռքը գտնուած
նախալ երկիրն իրարմէ բաժնող Պիւ-
ֆալ գետն անցնելով, երկու կին ա-
ռեւանգեցին և յետոյ իրենց երկրին մէջ
սպաննեցին : Գտնմանի մ'հետքը Ձու-
լուներու խոտախումբ մը հալածալի եր-
կիրն արշաւելով՝ անգղիացի հզօր-
տակաց դէմ չարութիւններ ըրին, և
անոնք ալ ստիպուեցան Անգղիոյ կա-
ռավարութեան միջամտութիւնը խնդ-
րել : Վերջապէս Ձուլուներու երկրին
բնակիչներէն մին նախալի հողին մէջ
մարդ մ'ապանելով փախաւ, և անգ-
ղիական իշխանութեանց յանձնուե-
ցաւ :

Անգղիական կառավարութիւնն
այս դէպքերէն զատ աւելի մեծ դան-
դատ մ'ալ ունէր Ձուլուներուն դէմ :
Ասկէ հինգ տարի առաջ Բարեյու-
սոյ հրումանգանին անգղիական իշխա-
նութիւնը նոյն իսկ Ձուլունի ժողո-
ւիրդեան խնդրածը դեպքան մը դըր-
կեց արդի թագաւոր Սէթէլայօի գա-
հակալութեան ժամանակ, և յան-
ձնն առաւ Ձուլուներուն անհատա-
կան ազատութիւնն և մինչև անգամ
կեանքն իրենց բնիկ վեհապետաց
բռնութիւններէն ազատ պահելու
համար օրէնքներ հրատարակել :

Սոյն օրէնքներուն ամենն ալ ան-
գործադրելի մնացին : Ձուլուներուն
թագաւորը ղրնուորագրութեան հա-
մար բռնաւորական գրութիւն մ'ի-

գործ կը դնէ, երկտասարդներն ամու-
րիութեան կը պարտաւորէ, իւր հզօր-
տակներն առանց դատաստանի իմաս-
կը մտնէ, և ուրիշ այնպիսի զեղ-
ծութիւններ կը գործէ զորս Անգղիա չը
կրնար ներել իրեն դրացի երկրի մը
մէջ :

Անգղիական լրագրքը ահա այս-
պէս կը բացատրեն Բարեյուսոյ հըր-
ումանգանի Անգղիական իշխանու-
թեան Ձուլուներուն թագաւորին դէմ
ունեցած դանդառներն, որոց պատ-
ճառաւ դեկտ. 20 ին վերջնագիր
մ'ուղղուեցաւ՝ Սէթէլայօ թագաւորին
հետեւեալ չորս առաջարկութիւննե-
րն ընելով :

1. Անգղիական երկիրն արշաւելով
չարիք գործող Ձուլուներն Անգղի-
ական իշխանութեանց յանձնուին,
որք զանոնք դատաստանի պիտի են-
թարկեն, և անոնց գործած չարեաց
իր բոխարկներով իւր քանի մը հարկւ-
արջառ տրուի :

2. Ձուլուներուն զօրաբանակը զի-
նախալ լինի :

3. Ձուլուն երկտասարդները բանա-
կին մէջ ծառայելէ առաջ ամուսնա-
նալէ արգելող օրէնքը ջնջուի :

4. Անգղիական ներկայացուցիչ մ'ըն-
դունուի :

Սէթէլայօ թագաւորն այս առաջար-
կութեանց առաջինն ընդունեց, այն
է պահանջուած չարագործներն Անգ-
ղիացւոց յանձնել, բայց վերջնագրին
միւս երեք կէտերուն համար խուսա-
փոխական պատասխան մը տուաւ : Ա-
սոր վրայ Բարեյուսոյ հրումանգանին
Անգղիական իշխանութիւնը վերադա-
նալ պայմանաւոր մ'որոշեց, որ յունվ.
11 ին կը վերջանար : Բայց ըստ որում
յայտնի էր թէ Ձուլուներուն թագա-
ւորը պատասխան մը չպիտի տար,
Հրումանգանի Անգղիական զօրաց հը-
րամանատար Լորտ Չէլմսֆորտ հըրա-
ման ստացաւ պատրաստ գտնուելու :

Յիշեալ զօրավարին հրամանատա-
րութեան ներքեւ 15,000 զօրաց բա-
նակ մը կար, որոց կէսէն աւելին Եւ-
րոպացի էին : Բայց Լորտ Չէլմսֆորտ
նահանգալիս յալ և ալ կողմերը
գտնուող ցեղերը զուսպ պահելու հա-
մար, այս զօրաց մէկ մասն այլ և ալ
կողմեր ցրուելու ստիպուած էր :

Վերջապէս, սոյն երկրորդ վերջ-
նագրին պատասխան չգալով, Լորտ
Չէլմսֆորտ իւր բանակին մէջ մասովը
յունվ. 12 ին Ձուլուներուն երկիրն ար-
շաւեց՝ իւր զօրքերը չորս գունդի
բաժնելով, որոց մին, ինչպէս կը յիշեն
ընթերցողք, Սէթէլայօի բանակին
հանդիպելով գրեթէ բնակիչն եղած
է : Չարմանալի է որ Անգղիական զօրաց
յունվարի մէջ կրած այս պարտու-
թիւնը փետր. 12 ին խմացուեցաւ Եւ-
րոպիոյ մէջ, բայց Բարեյուսոյ հրուման-
գանէն մինչև Եւրոպա ուղղակի հե-
ռաւոր չէին տրուի, անշուշտ հաղոր-

դակցութեանց մէջ գործադրութիւններ
ալ կրնան պատահիլ :

Այս է ահա Բարեյուսոյ հրումանգա-
նի երկրին մէջ գործող արդի վիճակն :
Անգղիական կառավարութիւնը մեծ
ջանք կընէ սոյն պարտութեան վրէժը
ընծելու, և անշուշտ ի մտոյ կարե-
ւոր լուրեր պիտի գան այն կողմէն :

ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲՈՒՄԵԼԻԻ

ԴԼՈՒԹ Բ.

ՔԱՂԱՔԱՅԵԱՅ ԻՐԱՆԻՈՒՆԻ

(Ծրարականութիւն ԹԻՒ 2246)

Յօդ. 6. — Ամեն մարդ իւր կրօնքն
համարձակ կը դաւանի, և իւր կրօնա-
կան պաշտամանց կատարման համար
հաւասար պաշտպանութիւն կ'ստա-
նայ իշխանութեանէն : Ամեն կրօնք
պարտին օրինաց, ինչպէս նաեւ ար-
տաքին արարողութեանց վրայ դըր-
ւած բարեկարգական կանոնադրու-
թեանց համաձայն վարուիլ :

Յօդ. 7. — Ոչ ոք կրնայ բռնադա-
տիլ կրօնքի մը գործող և արարողու-
թեանց որ և է կերպիւ մասնակցելու՝
կամ անոր հանգստեան օրերը պահե-
լու :

Յօդ. 8. — Անհատական ազատու-
թիւնն երաշխաւորեալ է :

Ոչ ոք կրնայ հալածուիլ, ձեռքա-
կալուիլ, բանտարկուիլ կամ աղատու-
թիւնը սեղմուելու վիճակի մէջ դըր-
ւել, բայց միայն օրինաց նախատեսած
պարագայներուն և տրամադրած ձե-
ւերուն մէջ :

Յանցանքի մէջ բռնուելու և օ-
րինաւորապէս հաստատեալ պաշար-
ման վիճակի կանոնաց գործադրու-
թեան պարագայներէ գուր՝ ոչ ոք
կրնայ ձեռքաւորուիլ կամ բանտար-
կիլ՝ առանց դատարանի պատճառա-
բանեալ հրամանագրոյ մը, որ պէտք
է հաղորդուի ձեռքաւորութեան ժա-
մանակ կամ առ առաւելն մինչև 2 և
ժամ :

Ամեն բանտարկեալ մարդ մինչև
երկու օր անպատճառ պէտք է հար-
ցաքննուի ձեռնհաս դատաւորէ :

Յօդ. 9. — Ոչ ոք կրնայ իւր բնա-
կան դատաւորաց ձեռքէն առնուիլ :
Եղեռնական գործող մէջ յատուկ
յանձնաժողովներ չեն կրնար հաս-
տատիլ :

Յօդ. 10. — Ո՛ր և է պատիժ մը չը
կրնար գործադրել՝ առանց կանխու
հաստատեալ օրինաց տրամադրու-
թեան :

Յօդ. 11. — Արեւելեան Բումէլի մէջ
բնակող ամեն անձի բնակարանն ան-
բռնաւորելի է : Ներսի չէ իշխա-
նութեան անդ մտնել՝ բայց եթէ օ-
րինաց նախատեսած պարագայից և
տրամադրած ձևոց մէջ :

Յօդ. 12. — Աշխատութեան, ար-
ուեստից կամ երկրագործութեան և
ոչ մէկ տեսակը կրնայ արգելուիլ՝ ե-
թէ հասարակաց բարոյականին, բը-
նականց ապահովութեան կամ առող-
ջութեան հակառակ չը լինի :

Յօդ. 13. — Արեւելեան Բումէլի
մէջ՝ հասարակային եկամուտներ յա-
ռաջ բերելու նպատակաւ կամ հա-
տարակաց ապահովութեան օգտին
համար օրինօք հաստատեալ մենա-
վաճառեանք զատ ուրիշ մենավաճառ
չկրնար կենալ :

Յօդ. 14. — Ամեն սեփականու-
թիւնք անբռնաբարելի են :

Ոչ ոք կրնայ իւր սեփականութե-
նէն զրկուիլ՝ բայց միայն օրինաւորա-
պէս հաստատեալ հասարակային օգ-
տի համար, նոյն պարագաներով և
ձևերով՝ զորս օրէնքը կը տրամադրէ,
նախապէս արդար հաստուցում մ'ը-
նելով :

Յօդ. 15. — Արեւելեան Բումէլի
մէջ ստացուածոց գրաւում չկրնար
տեղի ունենալ :

Ամբաստանելոց և ի բացակայու-
թեան դատապարտելոց ստացուած-
քը չկրնար արդեւելի ներքեւ (սէքէս-
թըր) դրուիլ :

Յօդ. 16. — Ուսուցչութիւնն ա-
զատ է :

Ուսուցչութեան ազատութիւնը
կը գործադրի՝ օրինօք սահմանեալ
կարողութեան և բարոյականի պոյ-
մանաց համեմատ, և իշխանութեան
հսկողութեան ներքեւ՝ բարի վարուց,
հասարակաց բարեկարգութեան և
պետական օրինաց պահպանութեան
տեսակէտով :

Սոյն հսկողութիւնը կրթական և
ուսումնական ամեն հաստատութեանց
վրայ կը տարածի՝ առանց որ և է
խտրութեան :

Յօդ. 17. — Ամեն ոք իրաւունք
ունի իւր կարծիքն յայտնելու խօսքով
գրով և մամուլ միջոցաւ՝ համաձայն
օրինաց :

Յօդ. 18. — Մամուլ ազատութիւնը
նուիրագործեալ է :

Օրէնքը կը պատժէ սոյն ազատու-
թեան զեղումը :

Հրատարակութեանց համար կան-
խաղատ քննութիւն (սանսիւր) չկըր-
նար հաստատուիլ :

Մամուլ հրատարակութեանց վրայ
որ և է տուրք չկրնար դրուիլ :

Յօդ. 19. — Արեւելեան Բումէլի
բնակիչք իրաւունք ունին խաղաղու-
թեամբ և առանց զինուոյ ի ժողով
գումարուելու՝ համաձայնելով այն օ-
րինաց, որք կրնան սոյն իրաւանց զոր-
ծածութիւնը կարգադրել՝ առանց
կանխաւ հրաման ստանալու պայմա-
նին երթարկելու :

Սոյն արամադրութիւնները բա-
ցովեայ տեղերու մէջ գումարմանց
չեն վերաբերիլ երեք, որ ստիկա-

նախան օրինաց երկարեալ կը մնան կատարեալապէս :

Յօդ. 20. — Արեւելեան Բուսմէի բը նակիչը իրաւունք ունին ընկերակցութեան ընկերակցութեանց նպատակին կամ գործածած միջոցներուն մէջ աւարտէն կամ պետութեան միջոցակար բան մը չգտնուի :

Հասարակաց ապահովութեան պահպանութեանը համար օրէնքը կը կանոնաւորէ ընկերակցութեան իրաւանց գործածութիւնը :

Յօդ. 21. — Ամեն ոք իրաւունք ունի հասարակային իշխանութեանց աղերսագրերը ներկայացնելու մէջ կամ քանի մ'անձանց ստորագրութեամբ :

Հաստատեալ իշխանութիւնը միայն իրաւունք ունին հաւաքական անուամբ աղերսագրեր ուղղելու :

Յօդ. 22. —

Վերջին թղթաբերով աւանումը Անգլիական լրագրիւրը կը ծանուցանեն թէ Բեդֆորտի գետինը Լորտ Լոֆթիլի հրաժարումն և անոր տեղ Լորտ Տըֆֆըրի անուանումը քաղաքական պատճառի մը համար չէ, այլ Լորտ Լոֆթիլի երկար ժամանակեայ աշխատութիւններէն ու մտահոգութեաններէն հանգչելու փախաբերով, գէթ առժամանակեայ կերպով թեթիւ պաշտօն մը խնդրեր է Անգլիական կառավարութեանէն, նա ալ զաղթաւանութեանց մէջ կառավարական պաշտօն մը յանձնելու է անոր :

Կօթայի Օրացոյցը վերջին պատերազմին մէջ թուրքիոյ կորուսած երկիրներուն և ժողովրդոց հետեւեալ ցանկը հրատարակած է :

քառ. քիլոմ. բնակիչք		
Ռումանիոյ անցած	44,860	320,000
Սերպիոյ	44,097	367,000
Գարատաղի	5,148	416,000
Աւստրիոյ (Պոնա և Հէրաք)	52,402	1,086,000
Աւստրիոյ (Սերպա)	35	2,000
Ռուսիոյ (Հայաստան)	25,709	317,000
Անգլիոյ (Կիպրոս)	9,603	435,000
Պարսկաստանի (Խոթուր)	900	8,000
	419,184	2,351,000

Թուրքիոյ ձեռքէն բոլորովին ելած այս գաւառաց վրաց եթէ այն գաւառներն ալ աւելցունենք որ այժմ տեղի կ'առնուին իրաւունք ունին Օսմ. տէրութեանէն, հետեւեալ արդիւնքը կը տեսնուի .

քառ. քիլոմ. բնակիչք		
Պուրպուրիա	63,863	4,859,000
Արեւելեան Բուսմէի	35,387	754,000
	99,252	2,610,000
Համադու մար	248,436	4,964,000

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ (ՀԱՎԱՍԾ)

Այս տարւոյ հասած հիւսիսէքս
Փարիզ 15 փետր.
Նախարարական որոշում մը Ազգային ժողովն, Սե. ծովն և Թուրքիոյ ծովեզերքէն ելող և մինչև իսկ մաքուր անցած թուղթ ունեցող բոլոր նաւուց վրաց գող. զիական ամեն նաւահանգիստներուն մէջ քառանկիւնի կանոնադրութեան գործադրութիւնը կը հրամայէ :

Աթէնք 15 փետր. առաւօտ.
Բրէժիտիոյ եկող հեռագիրը կը ծանուցանէ թէ Թուրքո-Հելլենական յանձնարարութիւնը հինգ արկի օրն երբորդ նիստ մ'ըրեր է. բայց այս նիստն առանց արդիւնք ունենալու փախուեր է, որովհետև Մուխթար փաշա յայտարարեր է

թէ Վեհափոքոյ տրամադրութեանց մէջ պարունակեալ տրամադրութիւններն իբրեւ վերջնական որոշում ճանչելու համար ստացած չէ :

Նոտին արձանագրութեան ստորագրութեան ետեւ, Հելլենական պատուիրակները Բրէժիտիոյ մեկնելու կը պատրաստէին, բայց Մուխթար փաշան անոնց ըսած լինելով թէ Բ. Պաշին նոր հրահանգներ կ'սպասէ, մեկնումին յետաձգել որոշեցին :

Վիէննա 15 փետր.

Կը հաւատեն թէ պաշտօնական լրագրերը նոր նախարարութեան ցանկը պիտի հրատարակէ փոքր :

Պ. Տը Եթէ մայիսը նախարարաց խորհրդոյն նախագահ պիտի լինի Եդեր, և Թաաֆի կոմսն ալ ներքին գործոց նախարար : Միւս նախարարք իրենց պաշտօնին մէջ պիտի մնան՝ բաց յԱվերբերիլի իշխանէն և Պ. Իւնկէրէն, որք նախարարութենէ կ'եկնեն :

Բէլթա 15 փետր.

Երեսփոխանաց ժողովին մէջ նախարարաց խորհրդոյ նախագահը՝ Բրակայի գաւառագրութեան Երգ յօդուածին ջնջման վրայ եղած հարցման մը պատասխանելով ըսաւ թէ այն յօդուածին գործադրութիւնն Աւստրիոյ շահուն վերաբերութիւն չունէր, և թէ այն յօդուածին ջնջումն ապագայ գծագրութեանց առաջը կ'առնուէր, և կ'աւարտուէր այն բարեկամական յարաբերութիւնները, որոնք Աւստրիա կը ստանէ Գերմանիոյ հետ :

Վիէննա 15 փետր.

Պաշտօնական լրագրերը նոր նախարարութեան ցանկը կը հրատարակէ վերջ ծանուցուած կերպով :

Բեդրապուրի 15 փետր.

Աժանա Ռիւս լրագրերը կըսէ թէ Չաւրը վաղը կ'ամ միւս օր Բեդրապուրի կը պատուի, և թէ Թուրքո-Ռումանական շարքութեան այսօր Բեդրապուրի պիտի հասնի :

Լոնտոն 15 փետր.

Օսմ. Բոնա.	42 1/2
Փոխ.	1865 46 1/4
»	1869 45 7/8
»	1871 53 1/2
»	1872 24 3/4
»	1873 44 1/2
» Երկրպ.	68 7/8
Անգլ. Բոնա.	96 3/4

Փարիզ 15 փետր.

Օսմ. Բոնա.	12,57 1/2
Գաղղ. Բոնա.	50/0 77,55
» »	» 80, 5
» »	» 50/0 112,60

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Տարի Եւրոպի անդամ իղգէթ փաշան Տիարպէրի կուսակալ աւանանցաւ :

Տիարպէրիի նախորդ կուսակալ Ապտալ-Բաճման փաշան Պաղատտի կուսական անուանեցաւ :

Եւրոպիոյ և Սիւրիոյ միջին գաւառները Պաղատտի վիլայէթէն զատուելով Մուսուլի վիլայէթին հետ միացան, և Թըրքիայի նահանգին կառավարիչ Ֆէյի փաշան Մուսուլի կուսակալ անուանեցաւ :

Անգլիոյ գետինը Սըր Լէյքըր, որ յառաջիկայ չորեքշաբթի օրն յԱնգլիոյ կողմէն, իւր հրաժեշտը մատուցանելու համար վաղը Վեհ. Մուլթանին պիտի ներկայանայ :

Արտաքին գործոց նախարար Գաւառիկոսի փաշան շաբաթ օրն Աւստրիական գետնախառն երթալով, Չիլի կոմսին հետ երկար տեսակցութիւն մ'ունեցաւ : Կը կարծուի թէ Նովի-Պաշարի խնդրոյն վրայ էր :

Վաղը լրագրերը կը ծանուցանեն թէ Թոթիլայէն զօրավարն Արքիմանու պօլոյ կուսակալ Բեւեֆ փաշային բա

յորոշակէս յայտարարեր է թէ Թուրքիոյ ուղղակի իշխանութեան ներքին մնացած երկիրներուն մէջ մինչև վերջ տրուելու 25 Ռումանական դորք չպիտի մնայ :

Պրուսիոյ կառակալ Ամմէտ Վեֆիք փաշան շաբաթ օրն իւր պաշտօնատեղին դնայ :

Այսօր Չաթագէտէն 7 փաշա Օսմ. դորք յԱնգլիոյ պիտի պիտի երթան շաբաթուրդով :

Պաշտօնական հրամանատար Ֆայիդ փաշան, որ պատերազմական առնելի կողմէն 6 ամիս բանտարկութեան և աստիճանագրութեան դատապարտուած էր, իւր պատիւը կը պահպանէ Սպարապետի դուռը :

Վաղը լրագրերն իւր շաբաթաւոր թերթին մէջ Անգլիոյ տէրութեան և Կ. Պօլոյ գետնային վրայ անպատեհ խորհրդածութիւնները ըրած լինելով՝ երկու ամիս գաղաւթման դատապարտեցաւ :

Կ. Պօլոյ քաղաքապետութեան մէջ աղբը բէթթը (կապ) վաճառող խանութպանաց կարգելու հինգ արշտուակէն աւելի ունենալ իրենց խանութին մէջ՝ եթէ փայտաշէն է, Գաւառիկոսի խանութներու մէջ ալ հարկը անուիւ է աւելի բէթթը չը պիտի գտնուի : Այս արգելքին պահպանութեան հսկելու համար քաղաքապետութեան պաշտօնային յատկապէս հրամաններ ստացած են, և հաւանակ վարուող խանութպանք ըստ օրինաց պիտի պատժուին :

Ռուսը Պուլքարի մէջ ճանաչաներու շինութեան համար գործածած գործաւորներուն 15 դրու մաքուր գրամ օրական վճարելէ զատ՝ անոնց հայն ալ կուտան, այս պատճառաւ մայրաքաղաքի մէջ պարապ մնացած շատ մարդիկ ամեն շաբաթ Վարնայի շաբաթուրդ Պուլքարի կերթան :

Ռուսիոյ օրը Պուլքարէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ռուս մանիոյ կառավարութիւնը Վարնայէն դնացող նաւուց և ուղեւորաց վրայ հաստատած Գաւառիկոսի վերուցեր է :

Ռուսիոյ վերադարձող Օսմ. դերեայ ամբողջ գումարն է 58,752, որոց մէջ 22 փաշա կոյ, 6 իշխող գերիներէն 70 հոգի Ռուսիոյ մէջ բնակելու փախաւ յայտնած լինելով չեն վերադարձած :

Գաւառ փաշայի թաղն տնտեսի վաճառական հարուստ թուրք մը, որ այս ձմեռ մեծ շահեր ընելու յաւանք չափազանց քանակութեամբ տնտեսի գնած ու ամբարած էր, օգերուն ներկայ վիճակին պատճառաւ իւր անկախութեան ի գերեւ ելնելու տեսնելով, անցեալ շաբաթ ինքզինք ըստ պանկէնց :

Վեցերորդ շրջանակի թագապետութեան պաշտօնակներն ուրբաթ օրն 3 սոյլ բռնեցին, որք Օսմանիէն բերուած ապականեալ միտ կը պաշտօնակէին Թագապետութեան պաշտօնակից սոյն աշարժութիւնը դուռնութեան արժանի է, բայց մարտտան պաշտօնակներն ինչպէս ու շաղթութիւն չընելով՝ աղաւ կը թողուն այդ հոսանք միտերն, որք ամենամանր հետեւանք կրնան ունենալ մայրաքաղաքի բնակչաց համար :

Գաղղիոյ աղբային վիճակահանութեան մէջ, որ երկու շաբաթ առաջ Փարիզ քաղաքացաւ, 125,000 ֆրանքանոց առաջին մեծ պարգևը Գաղղիացի գործաւորի մ'եղած է, որոց արհեստան էր խաղախորդութիւն (տէպպալ) :

Փարիզի շրջակային մէջ գտնուող ամեն տեսակ շէնքերու գումարն է 74,740 կոտր, և ամեն տուրքն են թակայ հասոյթն է 424 միլիոն 887,060 ֆրանք :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
ԷՍԶԱՄԵՆՈՒՄԻՍԻԷ	
Շարաթ իրիւնի դրուեցաւ	44, 4
Այս առաւօտ բացուեցաւ	44, 9
45 օրին	44, 43
Բուսմէի երկարութիւն	Փր. 51 50
Թիւղաղամ	Վր. 413

ԲՆԹՈՅԲ ՈՐՈՒԹՅՈՒՆ	
Կ. Պօլոյ 3 փետրվար	
Ստիլթէ Դէնիւրի բաժ. Անգլ. Վր. 4.25	
» փախաւորութեան »	3.15
Կ. Պօլոյ Պաղատտին »	6.15
Քրիտի Դէնիւրի »	5.15
Փոխ. 1863	Տր. 70
» 1865 »	80
» 1869 »	78
» 1872 »	24 1/2
» 1873 »	69
Թրամուս	Օսմ. Վր. 4 85

ԲՆԹՈՅԲ ԴՐԱՄՈՆ	
5 փետրվար	
Անգլ. Վր. 109 28	
Նորթոն Դր. 87 12	
Ինքիւրի Ռուս »	89 10
Գլըքսթը »	51 10
Մէնիլի տարբերութիւն »	7 30
Հինգսոց »	123
Պրիմ »	183

Օսմ. կայսերական Պաղատտն այսօր 420 դր զին որոշած է փախաւորութեան :

ԱՂԳԱՅԻՆ

Գետ ամեն ոք կը յիշէ որ երբեք Գաղատիոյ առաջնորդ Արքիմանի եպիսկոպոս կրօնափոխութեամբ իւր հովուական կոչման դժբեղէն ետեւ, վերադարձաւ կրկին Հայաստանեայց եկեղեցւոյ գիրկն, և Ս. Պատրիարք հայրն ալ ներկելով անոր այս գայթակղելի ընթացքին, զինքը մայրաքաղաքի գաւառ հրաւիրեց :

Բնական էր կարծել որ Արքիմանի եպիսկոպոսի ամաչան ու վերադարձն անկեղծ էր, և այդ բարձրատիման եկեղեցականն, որ գործունէութեան փորձեր տուած էր, պիտի շնորհ իւր ցաւալի սխալումը քաւել՝ արժանաւոր ընթացք մը բռնելով և զինքն օգտակար ընծալելով Ազգին, ճաւ է մեղ յայտարարել այժմ որ այս կարծիքն ի գերեւ եկաւ, և դժբաղդաբար իրողութիւնները կանխեցին հաստատել թէ այդ եպիսկոպոսին վերադարձն ոչ այնքան ներքին համոզման մ'աւարդինք էր, որքան պատրուակ մ'աղգին ծոցը աղբակելու, և ներքնապէս զայն յուղելու :

Արդէն Արքիմանի եպիսկոպոս իւր վերադարձէն ետեւ՝ Ս. Պատրիարք Հօր ըրած հրաւիրանաց անսաստելով՝ չէր ուղած կոտանդնու պոլիս գալ, և կը մնայ ցարդ ի Գաղատիա, ուր գայթակղութիւն սրվուած էր իւր կրօնափոխութեամբ, կրօնականեղ նաեւ իւր համարումն օտարաց առջև : Գաղատիոյ վիճակն որ դարձանալու և յառաջդիմելու ամեն տարբերութիւն իւր մէջ, բարոյական յետին թշուառութեան մէջ լինած էր Արքիմանի եպիսկոպոսի քմահաճ անկողի և միտքի տակն :

տար քեանֆիէի մէտարիֆի միւթէա-
հիւտինէ պիտ օլմադ վէ եհէլէ եհէն
շէր'տ վէ զայլման իլէ գըրմըզը եհէն
շիթէ վէ մաքարա իվիլի վէ պէհազ
թիթէ զայլմանըն էամանը մազպուզ
սէնէտէրինին վիթուտիլլէ մաւմէլէ-
սինին խիթամինտա հէման վէ մատամ-
բօլուն էամանը մազպուզ սէնէտինին
թարիթինտէն իթիպարէն նըսթը օն
պէշ կիւն վէ նըսթը տիկէրի տալի
տիկէր օն պէշ եանի թարիթի մէզ-
թիւրտէն իթիպարէն օթուզ պիթ կիւն
միւրուրինտէ սիմ մէճիտիէն եհիլթմի
դըշ հիւտալլէն իթիպարէն իթիպարէն
տէն վէրիլմէք շարթը վէ շէրայիթի
սայիթէսիլլէ ֆիլլաթը մուրաքամէլէ-
րիլլէ թուրպիլլէն էօհտէսինտէ օլուզ
շուպաթը բուճիլին պէշինճի բազար
իթիթէն կիւնիւ միւնաքաւայի պէշի-
յէսի իճրա օլունաճալլէնտան , իթա-
սընա թալիպ օլունալլէն եհիլմի մէզ-
թիւրտէ սաւաթ եհտիտէ Տարը Շու-
րայի տաքէրիլլէ կէլմէլէրի :

34 քեանուհի սանի 1879
Պապը Սէրասքէրի

Նիզամիլլէ Սարաճհանէ անպարըն-
տա իմալ օլունաճալլէն պուլունան
միւհիմմաթը սարաճիլլէ իլուն միւպալ-
եա օլունաճալլէ քըրք ալթը գալէմ
տէօքմէ թալլաթը թարիթի քօնթ-
րաթօտան իթիպարէն տօքսան պէշ
սէնէսի շուպաթը նիշայէթիլլէ քա-
տար հէք քանիլլէ նիշայէթիլլէն հէք
միւրալլաթը թէպիլլէ օլունաճալլէ վէ
մաքարա սէնէտէրինին վիթուտի ի-
լէ մաւմէլէսինին խիթամինտա էամա-
նը սիմ մէճիտիլլէ իլիլթմի դըշ հիւտալլէ
իլէ հէման իթա քըլլէնմաք շարթը-
րը իլէ միւնադաւայէ քօնուրմուշ վէ
ֆիլլաթը մալիմէ իլէ թալիպի էօհտէ-
սինտէ օլուզ շուպաթը բուճիլին ալ-
թընճը սալը կիւնիւ թէքրար միւնա-
դաւայի ալթիլլէսինին իճրաթը մու-
քարէր պուլունանը օլունալլէ օլ վէշ
իլէ իմալ վէ իթաթընա թալիպ օլուն-
ալլէն եհիլմի մէզթիւրտէ սաւաթ ալ-
թընա Տարը Շուրայի տաքէրիլլէ կէլ-
մէլէրի :

34 քեանուհի սանի 1879
Պապը Սէրասքէրի

Նիզամիլլէ էլլիլի անպարըն իլուն
Տարը Շուրաթա մաճիլլէ շուպաթը-
սի վէշ իլէ միւպալլէն օլունաճալլէ
էլլի պիւնաթէն քըրմըզը քէմէր ետն
քուշալլէն թարիթի քարաթաւան իթի-
պարէն եհիլմի պիւնէր տալիլլէ թէպիլլէ
անպար օլունալլէն արթաթը ալլէն-
մաք վէ բէսիլ կէօմիլլէ իլէ թէս-
լիլլէն քաւար քեանֆիէյի մէտարի-
ֆի միւթէահիւտէ պիտ օլմաք վէ
մաքարա սէնէտէրինին թարիթին-
տէն իթիպարէն էամանը օթուզ պի-
թէր կիւնիւ իլէ թալիլլէ իլէ վէ
սիմ մէճիտիլլէ իլիլթմի դըշ հիւտալլէ ի-
լէ նիզամիլլէ իթիպարէն վէրիլ-
մէք շարթը վէ շէրայիթի սայիթէսի
իլէ միւնադաւայէ քօնուրմուշ վէ պէ-
հէք առէտի սէրիլլէ օլունալլէ թա-
լիպի էօհտէսինտէ օլուզ շուպաթը
բուճիլին պէշինճի բազար իթիթէն
կիւնիւ թէքրար միւնաքաւայիլլէն
իճրաթը մուքարէր պուլունանը օլ-
ունալլէ օլ վէշ իլէ իթա իթիլլէ թա-
լիպ օլունալլէն եհիլմի մէզթիւրտէ Տա-
րը Շուրայի տաքէրիլլէ կէլմէլէրի :

34 քեանուհի սանի 1879
Պապը Սէրասքէրի

ԻՄԱՐԱԳԻՐ—ՏՆՈՐԷՆ
Կ. Ս. ԻՍԻԿԻՆՅԱՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԻՄԱՐԱՆ
ՀԱՆՔԱ ՇՈՐՈ ԽԱՆ




ՇԻՐԻԲԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ
ՇՈՐԵՆԱԻՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻՆԵԿԻ ԺԱՄԵՐԸ
1879 ՓԵՏՐՎԱՐ 1 ՀԻՆԵՇԱԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ
ՄԻՆՁՆԻ ՓԵՏՐՎԱՐ 28
ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈՐԵՆԱԻՆԵՐԸ

Ժ.Մ.	Ե-բ-դ-ե-զ-է-ը-թ	Թ-է.
1 43	Եհիմալլէն Մէզարալլէ Պէշիլլէն, Թարապիլա, 32	
2 30	Եհիլմալլէ, Սիլիլի, Էմիլի-Պոյաճ, Բ. Հիւսար, Պէշիլլէ, 20	
3 30	Եհիմալլէն Մէզարալլէ Պէշիլլէն, Թարապիլա, 17	
5	Մէզարալլէ Պէշիլլէն, Թարալլէ, Եհիլմալլէ, Բ. Հիւսար, 32	
6 30	Եհիմալլէն Պէշիլլէն, Թարապիլա, Պէշիլլէ, Եհիլմալլէ, Բ. Հիւսար, Գառնապիլլի, Սիլիլի, Սիլիլի-Պէշիլլէ, Սիլիլի, Սիլիլի, Պէշիլլէն, Գառնապիլլէ, Եհիլմա	

Ա-Բ-Գ-Դ-Ե-Զ-Ը	Թ-Ե
1 43	Արնալլէ, Գալաթիլլէ, Օրթալլէ, Պէշիլլէ, 22
2 43	Արնալլէ, Գալաթիլլէ, Օրթալլէ, Պէշիլլէ, 23
2 43	Պէշիլլէ, Արնալլէ, Գալաթիլլէ, Օրթալլէ, Պէշիլլէ, 28
3 43	Արնալլէ, Գալաթիլլէ, Օրթալլէ, Պէշիլլէ, Գալաթիլլէ, 22
4	Արնալլէ, Գալաթիլլէ, Օրթալլէ, Պէշիլլէ, Գալաթիլլէ, 21
10 13	Արնալլէ, Գալաթիլլէ, Օրթալլէ, Պէշիլլէ, Գալաթիլլէ, 21
11	» » » » » » 28

Ա-Բ-Գ-Դ-Ե-Զ-Ը	Թ-Ե
1 43	Պէշիլլէ, Բաշալլէ, Գալաթիլլէ, Ա. Հիւսար, Գալաթիլլէ, 21
1 43	Արնալլէ, Վանիլլէ, Օրթալլէ, Պէշիլլէ, Գալաթիլլէ, 2
2	Բ. Հ. Ս. Գալաթիլլէ, Մէզարալլէ, Պէշիլլէ, Թա- 33



ՊԱՐԻ ԳՈՐԾԻՔ
Փոքր պլանճէր կոչուած ձեռ-
քով գործող ու անքակ կար կարող
գործիքը ամեն տեսակ կար մեծ դիւ-

3 30	Պէշիլլէ, Պէշիլլէ, Բաշալլէ, Գալաթիլլէ, Ա. Հիւսար, Գալաթիլլէ, 34
8 43	Պէշիլլէ, Պէշիլլէ, Բաշալլէ, Գալաթիլլէ, Ա. Հիւսար, 23

ԿԱՄՈՒՐՁԷՆ ԵՆՈՂ ՇՈՐԵՆԱԻՆԵՐԸ

Ե-Բ-Գ-Դ-Ե-Զ-Ը	Թ-Ե
2 43	Գալաթիլլէ, Պէշիլլէ, Գալաթիլլէ, Օրթալլէ, Պէշիլլէ, Ար- 2
3 30	Պէշիլլէ, Օրթալլէ, Արնալլէ, Բ. Հիւսար, Եհիլմալլէ, 32
5	Պէշիլլէ, Օրթալլէ, Արնալլէ, Պէշիլլէ, Բ. Հիւսար, Պոյաճ, 20
6 30	Եհիլմալլէ, Պէշիլլէ, Գալաթիլլէ, Օրթալլէ, Պէշիլլէ, Ար- 23
8	Պէշիլլէ, Օրթալլէ, Արնալլէ, Բ. Հիւսար, Եհիլմալլէ, 22
10	Արնալլէ, Պէշիլլէ, Բ. Հիւսար, Պոյաճ, Եհիլմալլէ, 32
10 40	Պէշիլլէ, Օրթալլէ, Արնալլէ, Պէշիլլէ, Բ. Հիւսար, Եհիլմալլէ, 17
14 13	Պէշիլլէ, Բ. Հիւսար, Պոյաճ, Եհիլմալլէ, Եհիլմալլէ, Թարա- 20


Ա-Բ-Գ-Դ-Ե-Զ-Ը

2 43	Ուղլալլէ, Արնալլէ, Օրթալլէ, Գալաթիլլէ, Ար- 22
9 30	Գալաթիլլէ, Պէշիլլէ, Օրթալլէ, Գալաթիլլէ, Արնալլէ, 21
10 43	Գալաթիլլէ, Պէշիլլէ, Օրթալլէ, Գալաթիլլէ, Արնալլէ, 23
14 43	Պէշիլլէ, Օրթալլէ, Գալաթիլլէ, Արնալլէ, 25
12	Պէշիլլէ, Օրթալլէ, Գալաթիլլէ, Արնալլէ, 28

Ա-Բ-Գ-Դ-Ե-Զ-Ը

3 43	Եհիլմալլէ, Գալաթիլլէ, Օրթալլէ, Արնալլէ, (Բաշալլէ, Օրթալլէ, Գալաթիլլէ, 21
9 43	Գալաթիլլէ, Պէշիլլէ, Օրթալլէ, Վանիլլէ, Գալաթիլլէ, Ա. Հիւսար, 33
10 30	Գալաթիլլէ, Գալաթիլլէ, Օրթալլէ, Վանիլլէ, Գալաթիլլէ, Ա. Հիւսար, 34
14 40	Գալաթիլլէ, Օրթալլէ, Վանիլլէ, Վանիլլէ, Գալաթիլլէ, Ա. Հիւսար, 21
14 40	Գալաթիլլէ, Գալաթիլլէ, Օրթալլէ, Վանիլլէ, Վանիլլէ, Պէշիլլէ, 22

Ամեն ուրախ առաւօտ ժամ 4ին կամուրջէն շող եհաւ մ'Ել-
նելով իւսի, Գալաթիլլէ, Օրթալլէ, Վանիլլէ, Գալաթիլլէ, Ա. Հիւսար,
Գալաթիլլէ, Բաշալլէ, Գալաթիլլէ, Օրթալլէ, Պէշիլլէ, Եհիլմալլէ, Եհիլմալլէ,
5 1/2ին Պէշիլլէ, Օրթալլէ, Վանիլլէ, Գալաթիլլէ, Ա. Հիւսար, Գալաթիլլէ,
Գալաթիլլէ, Գալաթիլլէ, Օրթալլէ, Վանիլլէ, Վանիլլէ, Պէշիլլէ, 22



ՍՈՒԹԻՆԻ ՇԻՐՈՐ

Յայտնի է որ երախայր ծնանլէն
մինչ երեք տարեկան հասակը զը-
թէ շարունակ փորի ցաւ . փորհարու-
թիւն, ստամոքսի անհանգստութիւն,
անքուն մնալ, ջրային գրգռութիւն
եւայլն կուրենան, մանաւանդ ահա
հանկուտ միջոցին, և այդ նեղութիւն-
ներն ալ աւելի կը սաստկանան ամառ-
ւան տաք եղանակին : Սուրճիկ Շի-
րօրը վերայիշեալ դժուարութեանց ա-
մենուն ալ առաջը կուրեն և կը բը-
ժըլկէ, որով երախան կը հանգի ու
կը զօրանայ յուրախութիւն մեծ իւր
ծնողաց : Գործածողները շատ դժ-
են : Իւրողը կրնայ փրձել . գինն ա-
ժան է . նորածին երախայր կ'ալի-
լով կը տրուի, փոքր ամիսէն վեր եր-
դին օրը երեք անալի գրգռու-
եան և ընկերաց Սմերիկայի մաղաղան :

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի,
բաց ի իրաւի և տօն օրերէ :

Բաժանորդագրութեան տեղն է Գա-
լաթիլլէ Ստամբուլի Զատեհի թիւ
193, Շօրո խան Մոսթի խմբագրատե-
ղը : Իսկ դաւանաց մէջ հետեւեալ հոգա-
բարձուաց դրամներն են :

- ՉՄԻՒՆԻՒՄ. Ստեփան Էֆ. Տէտէ Կոն-
Նիւմիսիւմ. Խորով » Էսկիճեան .
ՊՐՈԻՍԻԱ. Ստեփան Էֆ. Թանկէրեան .
ՌՈՏՏՈՐՈ. Արթ. Տ. Արիստակէս ա-
ւագ քահանայ Ֆէպիան .
Ա.Գ.ԲԱՆՈՒՊՈԼԻՍ .
ԱՄՄՈՒՆ .
ՏՐՈՒՆՈՒՆ .
ԱՄՍՍԻԱ .
ՍԵԲԱՍՏԻԱ .
ԵԻՊՏԻԱ .
ԽԱՐԵՆՈՒՄ .
ԵՐԶՆԱՒԱ. Թաղէս Էֆ. Բաղրատուի .
ԿՈՐԻՆ. Կարապետ » Զաքարեան .
ՄՈՒՇ. Միլլի » Փօթիկեան .
ՎԱՆ .
ԲԵՐԼԻՆ. Սեդրակ » Խորաճեան .
ՏԵԳՐԱՆԱԿԵՐՏ. Թովմաս Էֆ. Թաղ-
ճեան .
ԵՊԵՍՏԱ .
ՄԱՐՍԱ .
ՖՈՐՇՈՒՆ. Ֆերէտ աղա Ս. Ֆերէտա-
եան .
ՏՓԵԼՍ. Պ. Նիկողայոս Տ. Ղևոնդեան .
ԿԱՆՍՏԱՆ. Պետրոս աղա Հիւրմեան :